

ԴՆԹ կոդեր

Ժամանակի սահմանափակում՝ 1 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Դեզօքսիռիբոնուկլեինաթթվի (ԴՆԹ) մոլեկուլները սովորաբար կրկնակի պարույրներ են՝ կազմված երկու երկար կենսապոլիմերներից, որոնք էլ իրենց հերթին կազմված են նուկլեոտիդներից: Յուրաքանչյուր նուկլեոտիդ կազմված է ազոտային հիմքից (գուանին (G), ադենին (A), թիմին (T) և ցիտոզին (C)), ածխաջրից և ֆոսֆորական թթվի մնացորդներից: ԴՆԹ-ի մոլեկուլների հիմնական դերը տեղեկատվության երկարատև պահպանումն է: ԴՆԹ-ի այն հատվածները, որոնք ծածկագրում են սպիտակուցներ, կոչվում են գեներ, իսկ ԴՆԹ-ի չծածկագրող հատվածներն ունեն կառուցվածքային նշանակություն կամ մասնակցում են ծածկագրող հատվածների ակտիվության կարգավորմանը:

Գենետիկական կոդը A, C, G, T տառերից կազմված հաջորդականություն է: Հաճախ պետք է լինում տրված հաջորդականությունում որոշակի հատվածի փնտրում կատարել: Հարկավոր է գրել ծրագիր, որը ներածում է երկու՝ S և T տողեր՝ կազմված A, C, G, T տառերից, և հաշվում է, թե S -ը T -ում քանի անգամ է հանդիպում: Ապա պետք է ստանալ բոլոր իրարից տարբեր տողերը, որոնք ստացվում են S -ից մեկ տառ հանելով և հաշվել T -ում նրանց հանդիպումների ընդհանուր քանակը: Ապա պետք է ստանալ բոլոր իրարից տարբեր տողերը, որոնք ստացվում են S -ին ցանկացած դիրքում մեկ տառ ավելացնելով և հաշվել T -ում նրանց հանդիպումների ընդհանուր քանակը:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված է S -ը, երկրորդ տողում տրված է T -ն: $2 \leq |S| \leq |T| \leq 100$: (|S| -ը ցույց է տալիս S տողի երկարությունը):

Ելքային տվյալներ

Պետք է արտածել երեք թիվ՝ պահանջվող քանակները: Թվերն իրարից պետք է բաժանել մեկական բացատով:

Օրինակ

Մուտք	Ելք
ACT ACTGACTG	2 4 3